




**Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2,
9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան»
տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ**

ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Rev02

Սեպտեմբեր 2022թ.

Մշակող՝

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ



ATMS Solutions

Հայաստան, Երևան,
0051
Գրիբոյեդովի 11-1
Բջջ.՝ +37499 109495
info@atms.am
www.atms.am

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Սեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Rev02

Մշակող՝

"ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս" ՍՊԸ

Ա. Տեր-Թորոսյան

Տնօրեն

Սեպտեմբեր 2022թ.

Փաստաթղթի մշակումը և հրապարակումը

Վարկած	Մշակված է	Ստուգված է	Ամսաթիվը	Նկարագրությունը
Rev01	Ա. Տեր-Թորոսյան Ս. Գյուրջիյան Գ. Սահակյան	Ա. Տեր-Թորոսյան	29.07.2022	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախնական հայտ
Rev02	Ա. Տեր-Թորոսյան Գ. Սահակյան	Ա. Տեր-Թորոսյան	30.09.2022	Հայտի վերանայում ստացված մեկնաբանությունների հիման վրա

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Բովանդակություն

1	Ընդհանուր տեղեկություններ	5
2	Հապավումներ	6
3	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	7
4	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական շրջանակները	8
5	Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիրը և տեխնիկական բնութագիրը.....	12
5.1	Հողատարածքը.....	12
5.2	Նախատեսվող գործունեության տեղադիրքը	13
5.3	Նախագծման թույլտվությունը և այլ համաձայնեցումներ.....	15
5.4	«Դալան» տեխնոլոգիական կենտրոնի բնութագիրը.....	15
5.5	Ծինարարամոնտաժային աշխատանքների փուլերը.....	17
5.6	Ազդակիր ենթակառուցվածքները	18
5.7	Ժամանակացույցը.....	19
5.8	Օգտագործվող մեխանիզմները և տեխնիկան	19
5.9	Աշխատուժը	20
5.10	Նյութական և էներգետիկ ծախսերը, դրանց մատակարարումը	20
5.11	Ջրօգտագործումը և ջրահեռացումը.....	22
5.12	Ոռոգման համակարգը.....	23
5.13	Ծառաթփային ծածկույթի հատումը և տարածքի բարեկարգման (կանաչապատման) ծրագիրը ...	23
5.14	Հողի բերրի շերտի հեռացումը և ժամանակավոր պահումը.....	26
5.15	Հրդեհային անվտանգությունը.....	26
5.16	Ապաստարանը	27
5.17	Աշխատանքի անվտանգությունը	27
6	Տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը	28
6.1	Տարածքի ֆիզիկաաշխարհագրական դիրքը	28
6.2	Դիտարկվող տարածաշրջանի ինժեներակառուցային պայմանները.....	28
6.2.1	Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը.....	28
6.2.2	Գրունտների ֆիզիկամեխանիկական հատկանիշները.....	29
6.2.3	Սեյսմատեկտոնիկ պայմանները	29
6.2.4	Հիդրոերկրաբանություն.....	30
6.2.5	Տարածքի ռելիեֆը.....	30
6.3	Տարածաշրջանի երկրաբանությունը	30
6.4	Մակերևութային ջրերը.....	30
6.5	Կլիման և օդերևութաբանական պայմանները	31
6.5.1	Ջերմաստիճանը	31
6.5.2	Խոնավությունը.....	31

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

6.5.3	Մթնոլորտային տեղումները	32
6.5.4	Քամի	32
6.6	Մթնոլորտային օդի աղտոտվածությունը	34
6.7	Բուսական և կենդանական աշխարհը	36
6.7.1	Բուսական աշխարհը	36
6.7.2	Կենդանական աշխարհը	41
6.8	Հատուկ պաշպանվող տարածքները	43
6.9	Պատմամշակութային հուշարձանները	44
6.10	Աղմուկի և թրթռման մակարդակները	45
6.11	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը	47
7	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման արդյունքները	47
7.1	Մթնոլորտային օդի աղտոտումը	48
7.2	Ազդեցություն ջրային ռեսուրսների վրա	48
7.3	Ազդեցություն հողային ռեսուրսների վրա	49
7.4	Թափոնների առաջացումը և կառավարումը	49
7.5	Աղմուկի և թրթռման ազդեցությունը	50
7.6	Ազդեցությունը կանաչ տարածքների վրա	51
7.7	Ազդեցությունը երթևեկության հոսքի վրա	51
7.8	Սոցիալ-տնտեսական ազդեցությունը	51
8	Բնապահպանական և աշխատանքի անվտանգության ազդեցությունների կառավարում և մշտադիտարկում	53
ա)	Բնապահպանական և աշխատանքի անվտանգության միջոցառումների ծրագիր	53
բ)	Բնապահպանական և աշխատանքի անվտանգության մշտադիտարկումների ծրագիր	58
	Հավելվածներ	

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

1 Ընդհանուր տեղեկություններ

1.1	Ձեռնարկող՝	Արմեն Տեր-Տաճատյան
1.2	Պատվիրատու՝	«ՔՅՈՒՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ
1.3	Նախագծող՝	«ՔՅՈՒՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ
1.4	Նախագծողի լիցենզիա՝	№ 16097-01-1.2Ի (Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն)
1.4	Նախագծողի կոնտակտային տվյալներ՝	
	- Հասցե	ՀՀ, ք. Երևան, Վերին Անտառային փող., 136/3 շենք
	- Հեռախոս	+37494 01-11-64
	- Էլ. հասցե	kasaryant@yahoo.com
1.5	Նախատեսվող գործունեության գործընկեր	«ԷՆԹԵՐՓՐԱՅԶ ԱՐՄԵՆԻԱ» ներդրումների աջակցման կենտրոն (ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն)
1.6	Նախատեսվող գործունեության վարչական սահմանները	ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան
1.7	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական հայտի մշակող՝	«ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս» ՍՊԸ
	- Հասցե	ՀՀ, Երևան, Գրիբոյեդովի 11-1
	- Հեռախոս	+37491 497128, +37499 109495
	- Էլ. հասցե	info@atms.am
	- Կայք	www.atms.am

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյսիս 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

2 Հապավումներ

ԱՎՕ	- Արտադրական Վտանգավոր Օբյեկտ
ԲԷՑ	- Բարձրավորտ Էլեկտրացանցեր
ԲԿ	- Բժշկական կենտրոն
ԲՊՄՄ	- Բնության Պահպանության Միջազգային Միության
ՀՀ	- Հայաստանի Հանրապետություն
ՀՆ	- Հիգիենիկ նորմեր
ՍՊԸ	- Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
ՓԲԸ	- Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՀԷՑ	- Հայաստանի Էլեկտրական Ցանցեր
ՍԹԿ	- Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՀՀՇՆ	- Հայաստանի Հանրապետություն շինարարության նորմեր
ՇՄԱԳ	- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄԱՆԳ	- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատում
ԻՏԱ	- Ինժեներատեխնիկական աշխատող
ՊՈԱԿ	- Պետական Ոչ-առևտրային Կազմակերպություն
ՊՄ	- Պինդ մասնիկներ
ՑՕՄ	- Ցնդող Օրգանական Միացություններ

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

3 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Երևանում նախատեսվում է կառուցել տարածաշրջանում աննախադեպ բիզնես հանգույց՝ «Դալան» անվանումով բազմաֆունկցիոնալ տեխնոլոգիական կենտրոն: 158000մ² ընդհանուր մակերեսով կենտրոնը ներառելու է գրասենյակային, առևտրային տարածքներ, սպորտային և զինվորական համալիրներ, հանրային և վերականգնողական վայրեր: Կենտրոնում գործելու է հյուրանոց, ավելի քան հազար մեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղի:

«Էներգիայի և Արմենիա»-ի¹ կողմից ուղեկցվող ամենախոշոր ներդրումային ծրագրերից մեկի՝ «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի հիմնման մեկնարկն ազդարարվել է 2022 թվականի մայիսի 6-ին: Կենտրոնը շահագործման կհանձնվի 2026 թվականին և կհանդիսանա BOMA A Class շինարարական ստանդարտին համապատասխանող առաջին կառույցը տարածաշրջանում: Ստանդարտը տրվում է ամենաբարձր դասի և հեղինակավոր շինություններին, որոնք առաջարկում են բարձրակարգ և որակյալ լուծումներ, ժամանակակից համակարգեր, մատչելիության բացառիկ աստիճան և շուկայում առանձնանում են ուրույն ներկայությամբ: Ծրագիրը իրականացվելու է LEED սերտիֆիկատի չափորոշիչների հիման վրա:

Building Owners and Managers Association (BOMA) International-ը հիմնադրվել է 1907 թվականին, ամերիկյան տեղական ասոցիացիաների և համաշխարհային մասնաճյուղերի դաշնության կողմից: Ավելի քան 100 տարի, առևտրային անշարժ գույքի առաջատար մասնագետների ասոցիացիան ներկայացնում է գրասենյակային, բժշկական, կոյուրստիսի և բազմաֆունկցիոնալ այլ շենքեր՝ սեփականատերերին, մենեջերներին, ծառայություններ մատուցողներին և անշարժ գույքի ոլորտի հետ կապ ունեցող այլ մասնագետներին: BOMA International-ը նախընտրելի գործընկեր է առևտրային անշարժ գույքի ոլորտում աշխատող այն մարդկանց համար, ում համար կարևոր է առավելագույնի հասցնել իրենց կարիերայի, կազմակերպության և ակտիվների արժեքը: Նրա առաքելությունն է զարգացնել դինամիկ առևտրային անշարժ գույքի ոլորտը՝ քարոզչության, ազդեցության և գիտելիքների միջոցով:

LEED-ը մշակված է ԱՄՆ Կանաչ շենքերի խորհրդի կողմից, և հանդիսանում է էկո շինությունների նախագծման, կառուցման, շահագործման և արտադրողականության հիմքը: Ներկայացված ռազմավարությունները և համապատասխան արդյունքներն օգնում են շենքերին և տարածքներին բացահայտել, թե ինչն է առավել կարևոր, սահմանել կայուն զարգացման նպատակներ և շարունակել հասնել այդ նպատակներին: 180+ երկրներում գրեթե 100000 նախագծեր մասնակցում են LEED-ին, ընդգրկելով ավելի քան 24 միլիարդ քառակուսի ֆուտ տարածք:

«Դալան» տեխնոլոգիական կենտրոնի ներդրումային արժեքը կազմում է մոտ 110 միլիոն ԱՄՆ դոլար:

2014թ.-ի հունիսի 21-ին ընդունված "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն, քաղաքաշինության բնագավառում՝ 1500 մ²-ից ավելի կառուցապատման մակերեսով քաղաքաշինական օբյեկտները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ Գ կատեգորիայի նախատեսվող գործունեության տեսակների համար սահմանված ընթացակարգով:

Հանրային ծանուցումը և քննարկումները

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում, Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի

¹<https://enterprisearmenia.am/hy/articles/%22Dalan%22%20Technology%20Center,%20was%20announced%20on%20May%206,%202022>

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյստեմբեր 2022	ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

շենքում՝ 22.07.2022թ.-ին, անցկացվել է հանրային քննարկում (1-ին հանրային քննարկում), որի ընթացքում քննարկվել են «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման, ինչպես նաև վերջինիս շրջակա միջավայրի վրա ազդեցության հետ կապված հարցեր: Վերջինիս հիման վրա, Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության կողմից տրվել է նախնական համաձայնությամբ՝ նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ, որը ներկայացված է սույն Հայտի **Հավելված 1**-ում: Նախնական համաձայնությամբ Երևանի քաղաքապետարանը նաև առաջարկել է մի քանի բնապահպանական միջոցառումներ, որոնց ներառվել են սույն Հայտի **Գլուխ 8**-ում:

4 Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական շրջանակները

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014 թ.-ին ընդունված "Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրույթային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք (2014թ.)

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հոդված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- **Հիմնադրույթային փաստաթուղթը՝** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ:
- **Նախատեսվող գործունեությունը՝** շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերագինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

Օրենքի հոդված 6-ը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ հոդված 7-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի գլուխ 2-ը (8-13 հոդվածները) նկարագրում են ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացի հիմնական մասնակիցների լիազորությունները:

Հոդված 14-ը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության ենթակա հիմնադրույթային փաստաթղթերի բնագավառները և նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ բնագավառների դասակարգվում են Ա, Բ և Գ կատեգորիայի ըստ շրջակա միջավայրի վրա նվազող աստիճանի:

Օրենքի հոդված 16-ի համաձայն նախատեսվող գործունեությունների փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա (Ա

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

կամ Բ կատեգորիայի գործունեության դեպքում) կազմվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար: Նախնական փորձաքննության տևողությունն է 30 աշխատանքային օր: Եթե փորձաքննության ընթացքում որոշվում է, որ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի, ապա ձեռնարկողին նախնական գնահատման հայտի հիման վրա տրվում է փորձաքննության եզրակացություն:

Հոդված 18-ը սահմանում է հիմնադրության փաստաթղթի ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության և նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հոդված 19-ը նկարագրում է փորձաքննության հիմնական փուլը: Սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դիպքում մինչև 60 աշխատանքային օր, իսկ նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դիպքում մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի հոդված 26-ը սահմանում է ՇՄԱԳ և փորձաքննության ընթացքում հանրային ծանուցմանը և քննարկումների իրականացմանը ներկայացվող պահանջները: Հանրության ծանուցումը իրականացվում է մինչ լուծումները կամ քննարկումները առնվազն 7 աշխատանքային օր առաջ զանգվածային լրատվամիջոցներով, հայտարարություններով և էլեկտրոնային փոստով: Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.11.2014 թ.-ի ՀՀ կառավարության **Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին** №1325-Ն որոշմամբ:

Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենքը (1994թ.) կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների հարցերը: Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների թույլտվությունների ստացման կարգը և է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները սահմանվում են ՀՀ կառավարության **Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին** №259, **Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության 1999 թվականի մարտի 30-ի** №192 **և 2008 թվականի օգոստոսի 21-ի** №953-Ն **որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին** №1673-Ն **և Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին** №160-Ն որոշումներով:

Թափոնների մասին ՀՀ օրենքը (2004թ.) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի 3-րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես, արտադրության և սպառման թափոնների դասակարգումը ըստ վտանգավորության դասի իրականացվում է 2006թ.-ի հոկտեմբերի 26-ի **ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին** ՀՀ բնապահպանության նախարարի №342-Ն հրամանի համաձայն:

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքը (2006թ.) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2001թ.) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

ՀՀ ջրային օրենսգրքի (2002թ.) հիմնական նպատակն է սահմանել երկրի ջրային ռեսուրսների պաշտպանության իրավական հիմքերը, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բավարարել քաղաքացիների և տնտեսական ոլորտների ջրային կարիքները և պահպանել ջրային ռեսուրսները ապագա սերունդների համար: Օրենսգիրքը կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

Բուսական աշխարհի մասին (1999թ.) և **Կենդանական աշխարհի մասին** (2000թ.) ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին №71-Ն և **ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին** №72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհիների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, ոնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին ՀՀ

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեկտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

կառավարության 31.07.2014թ. №781-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի №1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի №286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին №1396-Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:

Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ.-ի հուլիսի 20-ի №1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին №1404-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է հողի բերրի շերտի հանման նորմերը և հանված բերրի շերտի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները՝ հողային աշխատանքներ կատարելիս հողերի պահպանությունն ապահովելու, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիությունը բարձրացնելու և ռեկուլտիվացվող հողերի բերրիությունը վերականգնելու համար:

Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին ու տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին №108-Ն ՀՀ կառավարության որոշումը սահմանում է բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները:

Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին №967-Ն ՀՀ կառավարության որոշում:

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին №1616-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

Հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հուլիսի 26-ի հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի №595-Ն հրամանով սահմանվում են ՀՀ տարածքում հրդեհային անվտանգության կանոնները, որոնք պարտադիր են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների համար:

Սեյսմիկ պաշտպանության մասին ՀՀ օրենքը (2002թ.) սահմանում է սեյսմիկ անվտանգության ապահովման իրավական հիմքերը, նպատակը և սկզբունքները, խնդիրները, միջոցառումները, համակարգը, կազմակերպման հիմնադրույթները և կարգավորում է դրա հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության գործունեության ոլորտներում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, ՀՀ քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և օտարերկրյա քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները, օրենսդրության նորմերի և պահանջների կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության մարմինները:

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեկտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտեորման) և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզների հաստատման կարգը, սեյսմամիկրոշրջանացման և սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզներին ու դրանց կից ներկայացվող ամփոփագրի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի №1582-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին №1352-Ն ՀՀ կառավարության որոշում:

Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին №596-Ն ՀՀ կառավարության որոշում:

Ինժեներակառուցական հետազոտությունների նյութերի փորձաքննության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի №96 որոշման մեջ լրացում կատարելու մասին №1530-Ն ՀՀ կառավարության որոշում:

ՀՀԾՆ 31-03.02-2022 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմերը հաստատելու մասին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի №06-Ն հրամանով սահմանվում է քաղաքացիական պաշտպանության պաշտպանական շինությունների ծավալահատակագծային և կոնստրուկտորական լուծումներին, սանիտարա-տեխնիկական, էլեկտրատեխնիկական, կապի ու հակահրդեհային համակարգերին ու կահավորումներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև գոյություն ունեցող ապաստարանների տեխնիկական վիճակի, այդ թվում դինամիկ բեռնվածքների դիմակայության հետազոտություններին ներկայացվող պահանջները:

5 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիրը և տեխնիկական բնութագիրը

5.1 Հողատարածքը

«Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցումը նախատեսված է իրականացնել 2.5 հա հողատարածքի վրա: Այն ձևավորվում է երկու հողամասերից, որոնք սեփականության իրավունքով պատկանում են նախատեսվող գործունեության ձեռնարկող Արմեն Տեր-Տաճատյանին (նույնականացման քարտ №001490796 տրված 09.09.2014թ.-ին 003-ի կողմից): Այդ հողամասերի վերաբերյալ տեղեկատվությունը ամփոփված է ստորև, իսկ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները ներկայացված են **Հավելված 2-ում**

- 1) **Վկայական №30092019-01-0337**, հաստատված 30.09.2019թ.-ին,
Կադաստրային ծածկագիրը՝ 01-007-0282-0251,
Մակերեսի չափը՝ 0.2605 հա,
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ ընդհանուր օգտագործման:
- 2) **Վկայական №02062022-01-0313**, հաստատված 02.06.2022թ.-ին,
Կադաստրային ծածկագիրը՝ 01-007-0282-0306,
Մակերեսի չափը՝ 2.242214 հա,
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի,

Մոնթե Մերքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Երկրորդ՝ 2.242214 հա մակերեսով հողամասը ձևավորվել է 2022թ.-ին հետևյալ երեք հողակտորների միավորմամբ (տես նաև **Հավելված 3-ը**)՝

- Կադաստրային ծածկագիր՝ 01-007-0282-0248, հասցե՝ Մոնթե Մերքոնյան փող. 22/3,
- Կադաստրային ծածկագիր՝ 01-007-0282-0249, հասցե՝ Ծիծեռնակաբերդի խճուղի 9/1,
- Կադաստրային ծածկագիր՝ 01-007-0282-0251, հասցե՝ Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2:

Կառուցումից հետո «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի հասցեն կլինի հետևյալը՝ ՀՀ, Երևան, Ծիծեռնակաբերդի խճուղի 9/1-9/2:

Նախատեսվող գործունեության հողատարածքի հյուսիսային հատվածը մասամբ պատված է ծառաթփային բուսականությամբ (**Նկար 1**): Ծառերը մեծամասամբ մրգային են և ներկայացված են ծիրանիներով, խնձորենիներով, դեղձենիներով, սալորենիներով և ընկուզենիներով: Հանդիպում են նաև դեկորատիվ ծառեր և խաղող: Ըստ նախնական հաշվարկների, ծառերի ընդհանուր թիվը մոտ 100 է:

Նկ. 1. Նախատեսվող գործունեության տարածքի ծառաթփային բուսականությունը



5.2 Նախատեսվող գործունեության տեղադիրքը

«Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման համար նախատեսված տարածքը գտնվում է Մալաթիա-Մերաստիա վարչական շրջանում՝ Ծիծեռնակաբերդի խճուղու և Մոնթե Մերքոնյան փողոցի միջև ընկած հատվածում (**Նկար 2**): Նախատեսվող գործունեության տարածքի հյուսիսային մասը հարում է մարզահամերգային համալիրը Ծիծեռնակաբերդի խճուղուն միացնող ճանապարհին և կամուրջին: Հատկացված հողատարածքից դեպի արևելք մոտ 180մ հեռավորության վրա գտնվում է «Դավա» առևտրի կենտրոնը: Դեպի հյուսիս-արևելք՝ համապատասխանաբար 250մ և 600մ հեռավորությունների վրա, գտնվում են «Օրանժ» ֆիրմես ակումբը և «Ծիծեռնակաբերդ» հուշահամալիրը: Երևան պարկի հեռավորությունը հատկացված հողատարածքից կազմում է մոտ 500մ: Հարևանությամբ տեղակայված հողամասերը գտնվում են ակտիվ կառուցապատման փուլում: Մոտ 700մ դեպի հյուսիս-արևմուտք կառուցվում է մեծ բնակելի համալիր: Առանձին բազմահարկ բնակելի շենքեր կառուցվում են Մոնթե Մերքոնյան փողոցի երկայնքով:


Նախատեսվող գործունեության տարածքից բացվող տեսարանները դեպի շրջակա զգայուն կլանիչներ պատկերված են **Նկար 3**-ում:

Մոնթե Մեքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խնուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյսիս 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Նկ. 2. «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի և շրջակա զգայուն կլանիչների տեղադիրքը



Նկ. 3. Նախատեսվող գործունեության տարածքից բացվող տեսարանները



դեպի արևելք



դեպի հյուսիս երևելք



դեպի հյուսիս-արևմուտք



դեպի հարավ

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյստեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

5.3 Նախագծման թույլտվությունը և այլ համաձայնեցումներ

Տեխնոլոգիական կենտրոնի նախագծման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետարանի կողմից 27.11.2019թ.-ին տրված №01/18-07/1-S-843-1213 նախագծման թույլտվությունը (նարտարապետահատակագծային առաջադրանք), որը ներկայացված է սույն Հայտի **Հավելված 4**-ում:

26.05.2022թ.-ին «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից հաստատված ՎՋ2373/2022 Ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանի համաձայն, «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է Մոնթե Մելքոնյան փողոցին զուգահեռ անցնող ենթակառուցվածքներից, մասնավորապես՝

Ջրամատակարարում

Գործող խողովակի տրամագիծը և ճնշումը՝ Փ500մմ, P=1.0 մթն.,

Միացման կետը՝ Մոնթե Մելքոնյան փողոցով անցնող ջրագծից:

Ջրահեռացում

Գործող խողովակի տրամագիծը՝ Փ500մմ,

Միացման կետը՝ Մոնթե Մելքոնյան փողոցով անցնող կոյուղատարին:

Հեղեղատար

Գործող խողովակի տրամագիծը՝ Փ800մմ,

Միացման կետը՝ Մոնթե Մելքոնյան փողոցով անցնող հեղեղատարին:

Ոռոգում

29.07.2022թ.-ին «Երևան» ջրօգտագործողների ընկերության կողմից տրված №14/22 ոռոգման համակարգից օգտվելու տեխնիկական պայմանի համաձայն, «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի ոռոգման ջրամատակարարումը իրականացնել Հին Դալմայի ջրատարից:

Ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանը, ինչպես նաև Ոռոգման համակարգից օգտվելու տեխնիկական պայմանը բերված է սույն Հայտի **Հավելված 5**-ում:

Համաձայն 18.01.2022թ.-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից տրված Էլեկտրամատակարարման տեխնիկական պայմաններ - էլեկտրական ցանցին միացման պատվերի (ծածկագիր 73403111), նախատեսվող գործունեության տարածքում տեղադրվելու է համապատասխան հզորությամբ տրանսֆորմատորային ենթակայան, որը սնուցվելու է 6կՎ էլեկտրահաղորդման գծից: «Դալան» կենտրոնի համար պահանջվող հզորությունը կազմում է 8.510կՎԱ, իսկ լարումը՝ 6կՎ: Էլեկտրամատակարարման տեխնիկական պայմանները բերված են սույն Հայտի **Հավելված 6**-ում:

5.4 «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի բնութագիրը


Կառուցվող «Դալան» տեխնոլոգիական կենտրոնը՝ ուղղանկյուն հատակագծով 2 բազմահարկ շինություններից բաղկացած համալիր է, որի ընդհանուր մակերեսը մոտ 158000մ² է, իսկ ծավալը մոտ 180.5 հազ.մ³: Կենտրոնի կառույցը հանդիսանում է միաձույլ երկաթբետոնե (ե/բ) պունահեծանային հիմնակմախքով համակարգ, որի արտաքին և ներքին մակերևույթները կարկասի լցվածքի ձևով շարվում են տուֆ քարերով, որոնք մետաղական կեռիկներով ամրակցվում են հիմնական ե/բ կարկասին: Հիմքերը նախատեսվում է իրականացնել միաձույլ ե/բ խաչահատվող ժապավեններով:

Մոնթե Մեթոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Կենտրոնի բարձրությունը 0-ական նիշից 79.6մ է: Այն բաղկացած է լինելու 22 հարկերից, որոնցից 6-ը գտնվելու են 0-ական նիշից ցածր, իսկ 16-ը՝ բարձր (տես **Նկար 4-ը**): 0-ական նիշը գտնվում է 1015մ ծովի մակերևույթից բարձր:

Կառույցի տարածքները բազմապրոֆիլ նշանակության են, հիմնականում բաղկացած են լինելու օֆիսային տարածքներից, սակայն կլինեն նաև կոմերցիոն տարածքներ, կոնֆերանս սրահներ, գիտահետազոտական կենտրոններ, հյուրանոց, հանդիսությունների սրահ, ռեստորան, մարզասրահ, մոտ 1000 մեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղի և այլ տեխնիկական և սպասարկման սենյակներ (տես **Աղյուսակ 1-ը**):

Նկ. 4. «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի գծագրային տեսքը



Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Նախատեսվող գործունեության գլխավոր հատակագիծը ներկայացված է սույն Հայտի **Հավելված 7-ում**:

Աղյուսակ 1. «Դալան» կենտրոնի տարածքների նշանակությունները ըստ հարկերի

Հարկը	Նիշը	Նշանակությունը/նպատակային օգտագործումը
-6	-27մ	Ավտոկայանատեղի, էլեկտրական ենթակայան, տեխնիկական և հասարակական տարածքներ
-5	-22.5մ	Ավտոկայանատեղի, տեխնիկական տարածքներ, մարգասրահ
-4	-18.0մ	Ավտոկայանատեղի, տեխնիկական տարածքներ, լողավազան, բուժ. սենյակներ
-3	-13.5մ	Ավտոկայանատեղի, տեխնիկական տարածքներ, կոնֆերանս սրահ, արագ սնման կետեր, մարզահամալիր
-2	-9.0մ	Ավտոկայանատեղի, տեխնիկական տարածքներ, գիտահետազոտական կենտրոններ,
-1	-4.5մ	Ավտոկայանատեղի, ցուցասրահներ
1	0.0մ	Կոմերցիոն տարածքներ
2	5.4մ	Առևտրի սրահներ
3-14	9.9մ-ից 59.4մ	Օֆիսային տարածքներ
15	63.9մ	Օֆիսային տարածքներ, կոնֆերանս սրահ, տեխնիկական տարածքներ
16	68.4մ	Ռեստորան, այդ թվում նաև բացօթյա նստատեղերով

5.5 Ծինարարամոնտաժային աշխատանքների փուլերը

«Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցումը նախատեսված է իրականացնել հետևյալ փուլերով՝

Փուլ 1 - Նախապատրաստական աշխատանքներ և շին. հրապարակի կազմակերպում

- 1) տարածքի մաքրում և համահարթում, ավելորդ ծառերի հատում (տես **Բաժին 5.12-ը**),
- 2) ժամանակավոր ցանկապատի, տեղեկատվական վահանակների տեղադրում,
- 3) ժամանակավոր շինությունների, այդ թվում կապալառու կազմակերպության վարչական և կենցաղային շինությունների (ապահովելով սանիտարահիգիենիկ, կենցաղային և հանգստի պայմանները), ինչպես նաև պահեստային տեղամասի տեղադրում,
- 4) երկրաբաշխական բաժանարար ցանցի տեղադրում,
- 5) ջրամատակարարման և ջրահեռացման խողովակաշարերի ժամանակավոր միացում ենթակառուցվածքներին (տես **Բաժին 5.3-ը**), շին.հրապարակի պարագծով ջրային ցնցուղային ցանցային համակարգի տեղադրում:

Փուլ 2 - Հողային աշխատանքների իրականացում (ծավալները բերված են **Բաժին 5.10-ում**)

- 1) հողի բերրի շերտի հեռացում և ժամանակավոր պահում՝ տարածքի հետագա կանաչապատման/բարեկարգման համար օգտագործելու նպատակով,

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

- 2) հողային աշխատանքների կատարում էքսկավատորներով, իսկ դժվար հասանելի մասերում՝ ձեռքով,
- 3) մշակված գրունտի մի մասի պահպանում փորվածքների հետլիցքի համար, մնացած մասի տեղափոխում աղբավայր: Հետլիցքի իրականացում շերտային տոփանմամբ ծանր տոփանիչներով, իսկ հիմնային շերտը՝ թաթազդրոնով:

Փուլ 3 - Կենտրոնի կառուցման աշխատանքներ

- 1) պահանջվող նյութերի տեղափոխում շին. հրապարակ (ծավալները բերված են **Բաժին 5.10**-ում),
- 2) շենքի հիմքերի իրականացում,
- 3) կրող տարածական կոնստրուկցիաների կառուցում,
- 4) տանիքապատում,
- 5) ներքին և արտաքին շարվածքների իրականացում,
- 6) սալակների տեղադրում,
- 7) շենքի ներքին և արտաքին հարդարում:

Փուլ 4 - Մոնտաժման աշխատանքներ

- 1) ներքին ինժեներական գծերի իրականացում,
- 2) արտաքին ինժեներական ցանցի իրականացում,
- 3) վերելակների և այլ մեխանիզմների մոնտաժում,
- 4) արտաքին լուսավորության անցկացում,
- 5) ոռոգման համակարգի մոնտաժում:

Փուլ 5 - Տարածքի մաքրում և բարեկարգում/կանաչապատում (տես **Բաժին 5.13**-ը)

- 1) ավելորդ շինարարական աղբի հեռացում տարածքից և տեղադրում աղբավայրում, արժեքավոր թափոնների հանձնում/իրացում մասնագիտացված ընկերություններին,
- 2) տարածքի բարեկարգման/կանաչապատման աշխատանքներ:

5.6 Ազդակիր ենթակառուցվածքները

Նախատեսվող գործունեության հողատարածքի հյուսիսային հատվածում տեղադրված է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ «Կարմիր-2» 220կՎ օդային գծի №24 հենասյունը: Աշխատանքային նախագծի համաձայն, նշված հենասյունը չի խոչընդոտի շինարարական աշխատանքների իրականացմանը, պայմանով, որ կձեռնարկվեն սույն Հայտի **Գլուխ 8**-ում նախատեսված միջոցառումները: Օդային գծի №23 և №25 հենասյունները գտնվում են հողատարածքից դուրս (տես **Նկար 5**-ը): Նշված հենասյան հարևանությամբ տեղադրված է մեկ այլ մետաղական հենասյուն (**Նկար 5**, ձախ պատկեր՝ հեռվում), որը սակայն, չի շահագործվում և ենթակա է ապամոնտաժման «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից:

Ինչպես արդեն նշվել է **Բաժին 5.3**-ում, նախատեսվող գործունեության տարածքի մոտակա ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման և հեղեղատար ենթակառուցվածքները անցնում են Մոնթե Մելքոնյան փողոցին զուգահեռ՝ մոտ 300մ հեռավորության վրա:

Այլ ենթակառուցվածքները՝ Մոնթե Մելքոնյան փողոցի և Ծիծեռնակաբերդի խճուղու գիշերային լուսավորության էլեկտրահաղորդման գծերն են, ինչպես նաև Ստորին Հրազդանի ջրանցքը, որն գտնվում է նախատեսվող գործունեության տարածքից 600մ հեռավորության վրա դեպի հարավ-

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

արևմուտք՝ Մոնթե Մելքոնյան փողոցի ձախակողմյան հատվածում: Դրանք գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից պատշաճ հեռավորության վրա և չեն երթարկվի ազդեցության:

Նկ. 5. Նախատեսվող գործունեության տարածքի հյուսիսային մասում գտնվող հենասյունները



5.7 Ժամանակացույցը

Տեխնոլոգիական առանձնահատկություններից ելնելով՝ շինարարության տևողությունը մեկնարկման օրվանից հաշվարկված կազմելու է 32.8 ամիս: Հաշվի առնելով շինարարական մրցույթային փաստաթղթերի եռամսյա նախապատրաստական փուլը և ավարտական ակտերի փաստագրման 2 ամսյա ժամանակահատվածը՝ «Դալան» կենտրոնի կառուցման համար նորմատիվ տևողությունը ծրագրվում է 37.8 ամիս:

5.8 Օգտագործվող մեխանիզմները և տեխնիկան

«Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման համար անհրաժեշտ շինարարական սարքավորումների, մեխանիզմների և տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեխանիզմների և տեխնիկայի անվանացանկը և քանակները բերված են **Աղյուսակ 2**-ում:

Աղյուսակ 2. Ծինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը և քանակները

№	Անվանումը	Մակնիշը	Քանակը
1	Էքսկավատոր	Hyundai 170W-7	2
2	Բուլդոզեր	Komatsu D37-EX-22	1
3	Շարժական կոմպրեսոր	ЗИФ-55В	1
4	Վերամբարձ ավտոկրունկ	Галичанин КС-65713-1	2
5	Աշտարակային կրունկ	КБ-585	2
6	Տոփանիչ	CR 3/60	4
7	Հղկող մեքենա	Иэ-2201	6
8	Թրթռազդրոն	HAMI 3410	1
9	Ավտոբետոնախառնիչ	СБ-69Б	Հաշվարկով

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Անվանումը	Մակնիշը	Քանակը
10	Ավտոբետոնատար	KpA3-65055	Հաշվարկով
11	Ինքնաթափ մեքենա	MA3-5550	Հաշվարկով

Նաև շինարարության ընթացքում կիրառվելու են ձեռքի էլեկտրական, մեխանիկական, ատաղձագործական և ներկարարական գործիքներ:

Աղյուսակ 2-ում բերված շինարարական սարքավորումների, մեխանիզմների և տեխնիկայի շարժման գրաֆիկը/բեռնվածքը ըստ եռամսյակների ներկայացված է ստորև **Նկար 6**-ում:

Նկ. 6. Շինարարական մեխանիզմների և տեխնիկայի շարժման գրաֆիկը

Անվանումներ	Եռամսյակներ											
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Բուլդոզեր												
Էքսկավատորներ												
Տոփանիչներ												
Կռունկներ												
Ինքնաթափ մեքենաներ												
Բետոնախառնիչ												

5.9 Աշխատուժը

Աշխատանքային նախագծի համաձայն, տեխնոլոգիական կենտրոնի կառուցման համար անհրաժեշտ է ներգրավել 32 աշխատող, այդ թվում՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 4 մարդ,
- Արհեստագործներ և բանվորներ - 22 մարդ,
- Վարորդներ և մեքենավարներ - 6 մարդ:

5.10 Նյութական և էներգետիկ ծախսերը, դրանց մատակարարումը

«Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման համար պահանջվող բնառեսուրսները և հիմնական շինարարական նյութերը ամփոփված են **Աղյուսակ 3**-ում:

Աղյուսակ 3. Կառուցման համար պահանջվող բնառեսուրսները և շինարարական նյութերը

№	Բնառեսուրսի կամ շին. նյութի անվանումը	Չափման միավորը	Քանակը
1	Բետոն (տարբեր մակնիշների)	մ ³	85000
2	Ամրան և այլ մետաղակոնստրուկցիա	տոննա	13000
3	Խիճ, ավազ	մ ²	10500
4	Ասֆալտ	մ ²	6000
5	Մայրեր	մ ²	16000

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Բնառեստության կամ շին. նյութի անվանումը	Չափման միավորը	Քանակը
6	Արտաքին երեսպատման նյութեր (տրավերտին, տուֆ, բազալտ)	մ ²	69940
		մ ³	700
7	Փայտանյութ	մ ³	12000
8	Ներկեր և այլ քիմիական նյութեր	լ	5450
9	Մալուխներ, էլեկտրահաղորդման լարեր	գծամետր	2500
10	Ներքին հարդարման նյութեր	տոննա	800

Բետոնե խառնուրդը մատակարարվելու է բետոնախառնիչներով շինարարական հրապարակից մոտ 5կմ հեռավորության վրա գտնվող բետոնահանգույցից: **Աղյուսակ 3**-ում նշված մնացած նյութերը մատակարարվելու են Երևան քաղաքի մասնագիտացված բազաներից, միջին հաշվարկային հեռավորությունը կազմում է 10կմ: Հետագա հաշվարկներում (տես **Գլուխ 7**-ը) որպես միջինացված տվյալ կիրառվել է 8կմ հեռավորությունը: Երևան քաղաքի երթևեկության ծանրաբեռնվածության, ինչպես նաև մթնոլորտի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով, նախատեսվում է կիրառել նյութամատակարարման օպերատիվ կառավարման համակարգ, որի դեպքում պահանջվող նյութերը շին. հրապարակ են տեղափոխվում փոքր քանակներով (ըստ օրապահանջի) և հիմնականում գիշերային ժամերին, երբ երթևեկությունը ծանրաբեռնված չէ: Դա հնարավորություն է տալիս նվազագույնի հասցնել՝

- Ծին. հրապարակում պահվող նյութերի քանակները և արդյունքում նաև մթնոլորտային արտանետումները՝ հատկապես սորուն նյութերի դեպքում,
- Վնասակար նյութերի արտահոսքերը, որոնք առաջանում են հատկապես մթնոլորտային տեղումների դեպքում,
- Սորուն նյութերի կորուստները,
- Բեռնատար մեքենաների վառելիքի ծախսը և գազային արտանետումները՝ քանի որ երթևեկությունը ծանրաբեռնված չէ:

Նախատեսվող գործունեության ընթացքում իրականացվող հողային աշխատանքները բնութագրվում են հողային հանույթի (գրունտերի), հողի բերրի շերտի առաջացմամբ, դրանց մի մասի պահպանմամբ և մյուս մասի հեռացմամբ, որոնց քանակային արտահայտումը ամփոփված է ստորև՝

- Հողային հանույթի առաջացում (էքսկավացիա)՝ 189445մ³, ներառյալ՝
 - հողի բերրի շերտի առաջացում՝ մոտ 5000 մ³ (տես նաև **Բաժին 5.14**-ում),
- Գրունտների հետլիցք՝ 30180մ³,
- Գրունտների տեղափոխում դեպի աղբավայր՝ 154265մ³,
- Ծինարարական աղբ՝ 320մ³:

Տեխնոլոգիական կենտրոնի կառուցման ընթացքում այլ էներգառեսուրսների պահանջարկը (բացառությամբ ջրապահանջարկի) բերված է **Աղյուսակ 4**-ում:

Աղյուսակ 4. Այլ էներգառեսուրսների պահանջարկը (բացառությամբ ջրի)

№	Էներգառեսուրսի անվանումը	Չափման միավորը	Պահանջարկը
1	Էլեկտրաէներգիա	կՎտ	249
2	Խտացված օդ	հատ	13000

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ԾՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

5.11 Ջրօգտագործումը և ջրահեռացումը

Խմելու տնտեսական որակի ջուրը օգտագործվելու է աշխատողների սանիտարահիգիենիկ կարիքները հոգալու, ինչպես նաև կառուցապատման մակերեսի պարագծով խոնավ ջրային ցնցուղ ստեղծելու համար: Վերջինս նպատակ ունի թե մթնոլորտ փոշու արտանետումների նվազեցմանը և թե աշխատողների համար նորմալ և անվտանգ աշխատանքային պայմանների պահպանմանը՝ հատկապես տարվա տաք ժամանակահատվածում:

Ծինարարական հրապարակ մուտք գործող և տարածքից հեռացող շին.տեխնիկայի և բեռնատար մեքենաների անիվների լվացումը իրականացվելու է բարձր ճնշմամբ ապարատով, որի հնարավորություն է տալիս էականորեն խնայել ջրի ծախսը՝ հասցնելով այն մեկ մեքենայի հաշվարկով միջինը 0.1մ³ ծավալի²: Ծին. հրապարակում տեղադրվելու են 4 հատ 31մ² ծավալով ջրի տարողություններ, որոնցից ջուրը՝ պոմպի միջոցով մղվելու է դեպի անիվների լվացման կետեր:

Հիմնականում առաջանալու են սանիտարակենցաղային կեղտաջրեր՝ կապալառու կազմակերպության վարչական և կենցաղային շինություններից, որոնք ուղղվելու են դեպի կենտրոնացված ջրահեռացման խողովակ (տես **Բաժին 5.3**-ը):

Ծինարարական աշխատանքների ընթացքում մթնոլորտային տեղումների և այլ մակերևութային ջրերի շրջակա միջավայր ներթափանցումը բացառելու նպատակով շին.հրապարակի մետաղե վահանակային պանտեշի պարագծով կառուցվելու է 0.8մ խորությամբ և 1.0-1.5մ լայնությամբ խրամուղի (հարաչափերը հաշվարկված են ելնելով Երևան քաղաքում մթնոլորտային տեղումների օրինաչափությունից), որի հատակը ծածկվելու է մինչև 0.15մ հզորությամբ ավազե բարձիկով և դրա վրա տեղադրվելու է ծղոտով և հարդով լցված քաթանե գլանափաթեթ (տես **Հավելված 9**-ը): Ծինարարական աշխատանքների ավարտին այդ քաթանե գլանափաթեթը հեռացվելու է քաղաքային աղբավայր:

Խմելու և սանիտարահիգիենիկ ջրապահանջը շինարարության ողջ ընթացքի համար հաշվարկվել է համաձայն [3] փաստաթղթի, հաշվի առնելով, որ՝

- Մեկ բանվորական աշխատողի ջրածախսը՝ 25լ/օր,
- Մեկ վարչական աշխատողի կամ ԻՏԱ ջրածախսը՝ 16լ/օր:

Նախատեսվող գործունեության իրականացման փուլում ջրօգտագործման և ջրահեռացման հաշվարկը ամփոփված է **Աղյուսակ 5**-ում:

Աղյուսակ 5. Ջրօգտագործման և ջրահեռացման հաշվարկների արդյունքները

№	Ջրօգտագործման/ջրահեռացման հոդվածը	Նորմը, մ ³ /օր	Հաշվարկի ելակետային տվյալները	Ծին. ժամանակահատվածը, օր	Ընդհանուր ծախսը, մ ³
1	Խմելու և սանիտարահիգիենիկ կարիքներ				534.8
1.1	Բանվոր	0.025	28 աշխատող	700*	490.0

²Рекомендации по устройству пунктов мойки (очистки) колес автотранспорта на строительной площадке №52-03, Проектно-конструкторский и технологический институт промышленного строительства ОАО «ПКТИПромстрой», 2003
³СНиП 2.04.01-85. Внутренний водопровод и канализация зданий. Системы внутреннего холодного и горячего водоснабжения.

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյսիս 2022	ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Ջրագրություն/ջրահեռացման հոդվածը	Նորմը, մ ³ /օր	Հաշվարկի ելակետային տվյալները	Ծին. ժամանակահատվածը, օր	Ընդհանուր ծախսը, մ ³
1.2	Վարչական աշխատող/ԻՏԱ	0.016	4 աշխատող	700*	44.8
2	Խոնավ օդային ցնցուղով ջրցան	0.75		700*	525.0
3	Ծին. տեխնիկայի անիվների լվացում	0.1	10	510	510.0
Ջրագրություն, մ³					1569.8
4	Սանիտարակենցաղային կեղտաջրեր				526.8
Ջրահեռացում, մ³					526.8

*32.8 ամիս × 21.3 օր (1 ամսում աշխատանքային օրերի միջին թիվը) ≈ 700 օր

5.12 Ոռոգման համակարգը

«Դալան» տեխնոլոգիական կենտրոնի տարածքում կանաչ գոտիների (կանաչապատման) ընդհանուր մակերեսը կազմում է 10000մ² կամ հողատարածքի ընդհանուր մակերեսի 40%-ը (տես **Հավելված 7-ը**): Կանաչ գոտիների ջրումը նախատեսվում է իրականացնել ավտոմատացված ջրցանման՝ ջրացայտման եղանակով: Համաձայն [4] փաստաթղթի, կանաչապատման տարածքների ջրման նորմը կազմում է 3-4լ/մ² (հաշվարկների համար ընդունվել է 3/մ², քանի որ ջրացայտմամբ ջրումը դասվում է ոռոգման խնայողական եղանակների շարքին), իսկ ջրման պարբերականությունը՝ միջինում 3 օրը մեկ անգամ տարվա տաք ժամանակահատվածում՝ 8 ամիսների ընթացքում (տարեկան 80 օր): Ոռոգման համար տարեկան ջրապահանջը կկազմի՝ 3×10000×80=2400մ³:

Կանաչ գոտիների ոռոգման ջրամատակարարումը իրականացվելու է Հին Դալմայի ջրատարից (տես նաև **Բաժին 5.3-ը** և **Հավելված 5-ը**):

5.13 Ծառաթփային ծածկույթի հատումը և տարածքի բարեկարգման (կանաչապատման) նախագիծը

Ինչպես արդեն նշվել է սույն Հայտի **Բաժին 5.1-ում**, «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման հողատարածքի հյուսիսային մասում առկա ծառաթփային բուսականությունը (**Նկար 1**), մասնավորապես մոտ 100 ծառ, մեծամասամբ պտղատու (ծիրանի, խնձորենի, դեղձենի, սալորենի և ընկուզենի), սակայն ոչ խնամված, պետք է հեռացվեն՝ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը: Փոխարենը, ձեռնարկողը պարտավորվում է կանաչապատել կառուցապատման ենթակա մակերեսի մոտ 40%-ը (10124մ²)՝ տնկելով, թե տեխնոլոգիական կենտրոնի և, թե հարակից համայնքային տարածքներում: Նախատեսվող գործունեության տարածքի բարեկարգման և կանաչապատման պլան-սխեման պատկերված է **Նկար 7-ում**:

Ըստ Երևան քաղաքապետարանի Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 9/1 և 9/2 հասցեներում կառուցվող բազմաֆունկցիոնալ շենքի բարեկարգման, կանաչապատման և արդիականացման նախագծի (Բարեկարգման նախագիծ) վերաբերյալ 07.09.2022թ.-ի մասնագիտական եզրակացության (տես **Հավելված 10-ը**), Բարեկարգման նախագծում առկա թփատեսակները և ծառատեսակները իրենց էկոլոգիական և կենսաբանական առանձնահատկություններով հարմարված կլինեն նախատեսվող գործունեության տարածքի

⁴СНИП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Աղյուսակ 6. Նախատեսվող գործունեության տարածքում առաջարկվող ծառատեսակները և դրանց քանակները

№	Ծառաթփատեսակները	Քանակը, հատ
1	Լորենի	2
2	Զիակասկ սովորական	1
3	Արոսենի	1
4	Կատալպա	2
5	Ուռենի լացող	1
6	Եղևնի	1
7	Բալենի/սակուռա	2
8	Կեչի ելունդավոր	2
9	Փորզիցիա/թուփ	33
10	Գիհի վերտիկալ	17
11	Իլենի ճապոնական	45
12	Կարեքս /խոտաբույս	39
13	Խոստա/Ջղաշուշան	39
14	Մատնուռի թփաձև	18
15	Դրախտավարդ	69
16	Գիհի կազակական	51
17	Հացենի սպիտակ	134
18	Բշտիկատերև բոնչի	99
19	Կելրեյթերիա հուրանավոր	56
20	Սիրիական վարդ	99
21	Ճապկի	61
22	Սոճի գանճ	5
23	Միսկանտուս/խոտաբույս	19
24	Ծորենի թունբերգի	111
25	Կանաչ ցանկապատ - բուքսուս - սամշիտ - տոսալի (1 գծ.մ վրա պահանջվում է տնկել 4-6 հատ բուսակ)	370
26	Գիհի գնդաձև	3
27	Վեյգելա	27
28	Բշտիկատերև բոնչի Diabolo	31
29	Ասպիրակ ճապոնական	23
30	Սիզամարգ - 10124մ ² - 405 կգ խոտի սերմ (1մ ² պահանջվում է 0.04 կգ սիզախոտի սերմ)	10
Ընդամենը		1371

Երևան քաղաքի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի Ծիծեռնակաբերդի խճուղի 9/1 և 9/2 հասցեներում կառուցվող բազմաֆունկցիոնալ շենքի բարեկարգման, կանաչապատման և արդիականացման նախագիծը հաստատվել է Երևանի քաղաքապետարանի կողմից 07.09.2022թ.-ին

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

(Հավելված 10): Վերջինս ձեռնարկողին առաջարկել է նաև ստանձնել կառուցապատման տարածքի հյուսիսային սահմանին հարող կանաչապատ գոտում տնկված ակացիաների խնամքի պարտավորությունը:

Կանաչ գոտիների ջրման եղանակը, նորմաները, ինչպես նաև ոռոգման համակարգը նկարագրված են սույն Հայտի **Բաժին 5.12**-ում: Կանաչապատման իրականացման փուլում օգտագործվելու է մինչ շին. աշխատանքների մեկնարկը հանված և կառուցապատման տարածքում կուտակված/պահվող հողի բերրի շերտը (տես **Բաժին 5.14-ը**):

5.14 Հողի բերրի շերտի հեռացումը և ժամանակավոր պահումը

Մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը մոտ 5000մ³ ծավալով հողի բերրի շերտը ժամանակավորապես պահվելու է նախատեսվող գործունեության տարածքի հարավային մասում՝ ծածկված անջրաթափանց թաղանթով կամ արագ աճող խոտատեսակով (հողը ժամանակավորապես կայունացնելու համար), ինչպես նաև ապահովելով ՀՀ կառավարության №1396-Ն⁷ և №1404-Ն⁸ որոշումների պահանջները: Կուտակված հողի բերրի շերտը օգտագործվելու է կենտրոնի տարածքի հետագա բարեկարգման/կանաչապատման աշխատանքների ժամանակ՝ հաստատված կանաչապատման նախագծի համաձայն:

5.15 Հրդեհային անվտանգությունը

Նախագծի համաձայն, «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի հակահրդեհային համակարգը բաղկացած է լինելու հետևյալ բաղադրիչներից՝

- 1) Ավտոմատ հրդեհային ազդանշանային համակարգից,
- 2) Ավտոմատ գազային հրդեհաշիջման համակարգից,
- 3) Նախագծուչացման և տարիանման կառավարման համակարգից,
- 4) Անվտանգության ահազանգման համակարգից:

Կառույցի հրդեհաշիջման նպատակով նախատեսված են նաև՝

- 1) Հրշեջ հիդրանտներ (արտաքին համակարգ),
- 2) Հրշեջ ծորակներ (ներքին համակարգ),
- 3) Առաջնային հրդեհաշիջման միջոցներ (ածխաթթու գազով և փոշիով կրակմարիչներ),
- 4) Հրդեհաշիջման ջրի ավազանից՝ 200մ³, գտնվելու է տեխնոլոգիական կենտրոնի -5 հարկում՝ պոմպակայանի հետ:

Նախատեսված են լինելու նաև տարիանման ուղիներ, ինչպես նաև հնարավոր հրդեհներին և բռնկումներին արագ արձագանքելու ընթացակարգ, համաձայն որի՝

- Նշանակվելու է տեխնոլոգիական կենտրոնի հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ/ստորաբաժանում,
- Կառույցում աշխատող և կառույցը սպասարկող անձնակազմի հետ պարբերաբար անցկացվելու են հրդեհային անվտանգության գծով հրահանգավորումներ և ուսումնական վարժանքներ,

⁷<https://www.arlis.am/documentview.aspx?docID=71439>

⁸<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=117360>

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մայտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ	Վարկած Rev02

- Կենտրոնի սենքերը կահավորվելու են տարհանման պլաններով, հրդեհային անվտանգության տեղեկատվական թերթիկներով, հրդեհաշիջման միջոցների և տարհանման ուղիների գտնվելու վայրերը հուշող նշաններով և այլն,
- Ազդանշանային/տագնապի համակարգը, ինչպես նաև հիդեհաշիջման միջոցները սահմանված պարբերականությամբ ենթարկվելու են զննման և փորձարկման:

Վերոնշյալ միջոցառումները կապահովեն «Դալան» տեխնոլոգիական կենտրոնում ՀՀ հրդեհային անվտանգության կանոնները⁹:

5.16 Ապաստարանը

Պատերազմական և արտակարգ իրավիճակներում տեխնոլոգիական կենտրոնի աշխատողների և այցելուների քաղաքացիական պաշտպանությունը ապահովելու նպատակով որպես ապաստարան նախատեսված է օգտագործել շինության -5 հարկը, որը գտնվում է -22.5մ նիշի վրա: Նախագծի համաձայն այս հարկում նախատեսված են 246 մեքենաների համար ավտոկայանատեղի (մոտ 8000մ²), մարզասրահ (1778մ²), տեխնիկական տարածքներ, սանհանգույցներ, բավարար մուտքային և ելքային կետեր (4 հատ), ինչը համապատասխանում է ՀՀԾՆ 31-03.02-2022 *Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ* շինարարական նորմերի պահանջներին¹⁰, թե իր ծավալահատակագծային, թե սանիտարատեխնիկական և, թե կոնստրուկտորական լուծումներով:

5.17 Աշխատանքի անվտանգությունը

«Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման համար ընտրված կապալառու կազմակերպությունը (ներառյալ իր ենթակապալառուները) մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը, պետք է մշակի շինարարական աշխատանքների աշխատանքի անվտանգության կառավարման պլան, որում առնվազն պետք է ներառվեն՝

- 1) Աշխատանքների և աշխատաքային գոտիների քիմիական և ֆիզիկական ռիսկերը (ջերմային ճառագայթում, աղմուկ, թրթռում, թունավորում, շարժվող մեխանիզմներ, էլեկտրական հարված, սայթակում և այլն),
- 2) Հնարավոր արտակարգ իրավիճակները (հրդեհ, վնասվածք, նավթամթերքի արտահոսքեր և այլն) և դրանց արագ հակազդման գործողությունները,
- 3) Աշխատանքներին ներգրավված անձանց աշխատանքի անվտանգության ոլորտում պարտավորությունները և պատասխանատվությունը,
- 4) Ուսուցման և հրահանգավորման թեմաները ու դրանց իրականացման պարբերությունը և ժամանակացույցը (նախնական, աշխատատեղում, կրկնվող, նպատակային),
- 5) Անձնակազմի հատուկ և կոլեկտիվ պաշտպանության միջոցները,
- 6) Կրակմարիչների տեղադրման վայրերը և անհրաժեշտ քանակները,
- 7) Առաջին բուժ. օգնության սենյակները և մոտակա բժշկական հաստատությունները,
- 8) Քիմիական նյութերի հետ վարվելու ընթացակարգը,
- 9) Շին. տեխնիկայի և տրասնպորտային միջոցների անվտանգ տեղաշարժման ուղիները,

⁹<https://www.arlis.am/documentview.aspx?docID=99397>

¹⁰<http://www.irtek.am/views/act.aspx?aid=115326>

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

- 10) Արտադրական վտանգավոր օբյեկտների (հիմնականում ամբարձիչներ) տեխնիկական անվտանգության փորձաքննությունը և զննումները,
- 11) Ծին. հրապարակի աշխատանքի և հրդեհային անվտանգության ստուգայցները, ուղղիչ միջոցառումների վերացմանը միտված միջոցառումները,
- 12) Առավել վտանգավոր աշխատանքների անվտանգ իրականացման ընթացակարգը,
- 13) Աշխատանքի պաշտպանության մշտադիտարկման մեթոդները:

Նախատեսվող գործունեության բաղադրիչների անվտանգ իրականացումը և ներգրավված անձնակազմի առողջությունը ապահովելու նպատակով կմշակվի նաև շին. աշխատանքների անվտանգության պլան, որտեղ ամփոփված կլինեն աշխատանքի պաշտպանության համար անհրաժեշտ անձանց և հաստատությունների կոնտակտային տվյալները, կրակմարիչների, պաշտպանության և անվտանգության այլ միջոցների տեղադրման վայրերը, հակավթարային գործողությունները և այլն:

6 Տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը

6.1 Տարածքի ֆիզիկաաշխարհագրական դիրքը

Նախատեսվող գործունեության համար հատկացված տարածքը գտնվում է Երևան քաղաքում, Մալաթիա-Մերաստիա վարչական շրջանում՝ Ծիծեռնակաբերդի խճուղու և Մոնթե Մելքոնյան փողոցի միջև ընկած հատվածում (**Նկար 2**): Տարածքի հյուսիսային մասը հարում է Մարգարիտաբերդի համալիրը Ծիծեռնակաբերդի խճուղուն միացնող ճանապարհին և կամուրջին: Հատկացված հողատարածքից դեպի արևելք գտնվում է «Դալան» առևտրի կենտրոնը: Դեպի հյուսիս-արևելք համապատասխանաբար «Օրանժ» ֆիթնես ակումբը և «Ծիծեռնակաբերդ» հուշահամալիրը: Երևան պարկի հեռավորությունը հատկացված հողատարածքից կազմում է մոտ 500մ:

6.2 Դիտարկվող տարածաշրջանի ինժեներաերկրաբանական պայմանները

Նախատեսվող գործունեության վայրի ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրությունը իրականացվել է 2022 թվականին «Նորգեո» մասնագիտացված ընկերության կողմից: Ուսումնասիրման արդյունքները ամփոփված են ստորև՝

6.2.1 Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Նախատեսվող գործունեության հողատարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ շերտերը (վերևից-ներքև)՝

Շերտ թիվ 1. Լիցք, չպառկապնդված, խճաքարա-կավավազային, մասամբ կավավազա-խճային կազմի: Շերտն ունի համատարած բնույթ՝ 0.2-4.0 մետր հզորություն:

Շերտ թիվ 2. Բազալտ մոխրագույն, թույլ ծակոտկեն, հազվադեպ՝ չեչոտ, ստորին մասերում առանց ծակոտիների, ճեղքավորված, մասամբ ջարդոտված մեծաբեկորային առանձնացումներով, հազվադեպ՝ միջմեծաբեկորային: Տեղ-տեղ խարամային բնիկներով: Շերտը համատարած է և ունի 16.1-36.1 մետր բացված հզորության:

Շերտ թիվ 3. Խարամ հրաբխային, մուգ վարդագույն երանգի, խճային կազմի: Շերտը համատարած է և ունի 1.0-2.5 մետր հզորություն:

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

6.2.2 Գրունտների ֆիզիկամեխանիկական հատկանիշները

Համաձայն փորված հորատանցքերի և դիտարկման կետերի տվյալների, ուսումնասիրվող տեղամասի երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում են գրունտների ինժեներաերկրաբանական հետևյալ տիպերը՝

- Շերտ թիվ 1 - լիցքային,
- Շերտ թիվ 2 - ժայռային,
- Շերտ թիվ 3 - խճային:

Հորատանցքերից երկուսի (1-ին և 3-րդ հորատանցքեր) լուսանկարները բերված է ստորև **Նկար 8-ում**:

Նկ. 8. Առաջին և երրորդ հորատանցքերի կետերը



6.2.3 Սեյսմատեկտոնիկ պայմանները

Սեյսմատեկտոնական տեսակետից ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Երևանյան խզվածքի սահմաններում:

Ինժեներաերկրաբանական տեսակետից շերտ թիվ 1 լիցքային գրունտները իրենցից հետաքրքրություն չեն ներկայացնում:

Շերտ թիվ 2-ի (բազալտային) գրունտները, ըստ լաբորատոր տվյալների, վերցված փորձանմուշների խտությունները տատանվում է 2.09-2.11գ/սմ³, ծակոտկենությունը 0.252-0.279, իսկ սեղման ժամանակ դիմադրությունը 32.1-40.3ՄՊա սահմաններում: Լաբորատոր տվյալները ցույց են տալիս, որ թիվ 2 բազալտային շերտը, ըստ ՀՀ Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի (ՀՀՇՆ 20.04-2020), համապատասխանում է սեյսմիկ առաջին կարգին: Այս գրունտները կարող են որպես հիմք ծառայել նախագծվող բազմաբնակարան բազմաֆունկցիոնալ շենքերի համար:

Շերտ թիվ 3. (հրաբխային խարամ) գրունտները ունեն 1.48տ/մ³ խտություն, 350 ներքնակի շփման անկյուն (φ), 40.0 ՄՊա դեֆորմացիայի մոդուլ (E), 0.4ՄՊա հաշվարկային ճնշում (R), 5.0կգ/սմ³ ներքնակի գործակից (տես հավելվածում): Այս շերտը, ըստ ՀՀ Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի (ՀՀՇՆ 20.04-2020), համապատասխանում է սեյսմիկ երկրորդ կարգին:

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Վտանգավոր ֆիզիկականության բերանները և պրոցեսները (սողանք, կարստ, և այլն) տեղամասում բացակայում են:

6.2.4 Հիդրոերկրաբանություն

Հիդրոերկրաբանական տեսակետից տվյալ տեղամասերում տարածված են միջլավային և լավատակի, մասամբ նաև վերին հատվածներում, շերտային տիպի ջրերը, որոնք ունեն համեմատաբար խորը տեղադրում: Գրունտային ջրերը 40.0մ և 60.0մ հորատանցքերում չեն բացահայտվել, դրանք ըստ գրականության տվյալների գտնվում են ավելի խորը հորիզոններում:

6.2.5 Տարածքի ռելիեֆը

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տեղամասը տեղադրված է մեղմաթեք մինչև 10-120մ ձորակի հյուսիս-արևելյան լանջին: Հյուսիսային հատվածում ռելիեֆի ամենաբարձր հատվածը գտնվում է 1022մ բացարձակ նիշի վրա, որը դեպի հարավային հատված անցնելիս նվազում է՝ հասնելով 988մ բացարձակ նիշի:

6.3 Տարածաշրջանի երկրաբանությունը

Երկրաբանական տեսանկյունից Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Ծորադրյուրի շերտախումբն է, իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Երևանի տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային և հրաբխանստվածքային ֆացիաներով: Ժայռային գրունտները՝ դոլերիտային բազալտները, անդեզիտա-բազալտները և տեղ-տեղ դրանց վրա տեղադրված կիսաժայռային նստվածքները՝ տուֆերը, առանձնանում են մեծ ամրությամբ: Փոխար գրունտները հիմնականում հանդիսանում են ժամանակակից լանջային նստվածքները:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանի և բուն տեղամասի երկրաբանական կառուցվածքի ձևավորման մեջ մասնակցում են վերին պլիոցենի դոլերիտա-բազալտային, լավային հաստվածքները, որոնք ուսումնասիրվող տեղամասում ունեն համեմատաբար խորը տեղադրում և հիմնականում ծածկված են ժամանակակից նստվածքներով՝ ներկայացված էյուվիալ, դեյուվիալ-պրոյուվիալ խոշորաբեկորային, կավային, ավազային և տեխնածին գրունտներով:

6.4 Մակերևութային ջրերը

«Դալան» տեխնոլոգիական կենտրոնի համար հատկացված հողատարածքին ամենամոտ մակերևութային ջրային հոսքը՝ Ստորին Հրազդանի ջրանցքն է, որն անցնում է նախատեսվող գործունեության տարածքից դեպի հարավ-արևմուտք մոտ 600մ հեռավորության վրա՝ Մոնթե Մելքոնյան փողոցի ձախակողմյան հատվածում: Հրազդան գետը անցնում է նախատեսվող գործունեության տարածքից դեպի արևելք մոտ 1000մ հեռավորության վրա: Թե Հրազդան գետը և, թե Ստորին Հրազդանի ջրանցքը գտնվում են նախատեսվող գործունեության տարածքից պատշաճ հեռավորության վրա և չեն կարող կրել բացասական ազդեցություն:

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

6.5 Կլիմայի և օդերևութաբանական պայմանները

Շրջանը և տարածքը գտնվում են տաք կլիմայական գոտու մեջ, ունի շոգ ամառով և ցուրտ ձմեռով խիստ մայրցամաքային կլիմա: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է $+41^{\circ}\text{C}$, նվազագույնը -30°C : Գերակշռում են միջին արագությունների առավելագույնով 6.8մ/վ հյուսիս-արևելյան քամիները: Հնարավոր են 20 տարվա ընթացքում մեկ անգամ, մինչև 24 մ/վ արագության քամիներ: Քամու ճնշումը կազմում է 45կգոմ²: Ջրան ծածկոցի հաստությունը, տասնօրյա առավելագույնում, կազմում է 58սմ, ճնշումը՝ 70կգոմ²: Հողի սառչելու առավելագույն խորությունը կազմում է 75սմ:

Ընդհանուր առմամբ Երևանի կլիմայի անապատային-կիսաանապատային է, ավելի բարձրում՝ չոր տափաստանային: Տեղումների հիմնական մասը թափվում է գարնանը, մասամբ՝ աշնանը: Տեղումների սակավությանը զուգահեռ՝ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է հիմնականում ամբողջ տարվա ընթացքում: Մառախուլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես մայիս-սեպտեմբեր ամիսներին, հազվադեպ երևույթ է:

6.5.1 Ջերմաստիճանը

Ըստ ՀՀԾՆ II-7.01-2011 *Շինարարական կլիմայաբանություն* շինարարական նորմերի, տարածաշրջանում օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանները բերված են **Աղյուսակ 7**-ում:

Աղյուսակ 7. Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճանը, °C

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Երևան «Արաբկիր»	1113	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

6.5.2 Խոնավությունը

Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը կազմում է 61%: Ամենացուրտ ամսվա օդի միջին հարաբերական խոնավությունը կազմում է 69%, իսկ ամենաշոգ ամսվանը՝ 35%: Ըստ ՀՀԾՆ II-7.01-2011 *Շինարարական կլիմայաբանություն* շինարարական նորմերի, տարածաշրջանում օդի հարաբերական խոնավության տվյալները բերված են ստորև **Աղյուսակ 8**-ում:

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Աղյուսակ 8. Օդի հարաբերական խոնավության տվյալները

Բնակավայրի, օդերևութա- բանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների											Միջին տարեկան,%	Միջին ամսական ժամը 15-ին		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր		Դեկտեմբեր	Ամենացուրտ ամսվա, %	Ամենաշոգ ամսվա, %
Երևան «Արաբկիր»	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

6.5.3 Մթնոլորտային տեղումները

Միջին տարեկան տեղումների քանակը կազմում է 353մմ: Առավելագույնը դիտվում է մայիս ամսին՝ 55մմ, նվազագույնը օգոստոս ամիսին՝ 8մմ: Ըստ ՀՀԾՆ II-7.01-2011 **Ճինարարական կլիմայաբանություն** շինարարական նորմերի, տարածաշրջանում մթնոլորտային տեղումների վերաբերյալ տվյալները բերված են ստորև **Աղյուսակ 9**-ում:

Աղյուսակ 9. Մթնոլորտային տեղումներ

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$, մմ													Զնաձայնություն		
	ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, մմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Զյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
Երևան «Արաբկիր»	28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53	152
	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47			


6.5.4 Քամի

Դիտարկվող տարածքում քամու միջին արագությունների բաշխվածությունը տարվա տարբեր ժամանակաշրջաններում բերված է ստորև **Նկար 9**-ում:


Քամու միջին արագության ամենամեծ արժեքը գրանցված է հուլիս ամսին հյուսիսային ուղղությամբ՝ 6մ/վ արագությամբ: Տարվա տարբեր ժամանակաշրջաններում քամու միջին ամսական արագության ամենամեծ արժեքը ստացվում է հուլիս ամսին և կազմում է 3.4մ/վ, իսկ միջին տարեկան արագությունը հավասար է 2մ/վ: Ուժեղ քամիներով օրերի քանակը (≥ 15 մ/վ) 30-ն է: Քամու ուղղությունների կրկնելիության պատկերները բերված են ստորև **Նկար 10**-ում: Ամենամեծ կրկնելիությունը դիտվում է հուլիս ամսին հյուսիս-արևելյան ուղղությամբ և կազմում է 37%:

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Նկ. 9. Քամու միջին արագությունների բաշխվածությունը



Նկ. 10. Քամու ուղղությունների կրկնեւորությունը



Մոնթե Մեթոդային փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խնուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյսիս 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

6.6 Մթնոլորտային օդի աղտոտվածությունը


ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվական կենտրոն» ՊՈԱԿ (Էկոմոնիթորինգ) կողմից: ՀՀ և միջազգային պահանջների համաձայն անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի օքսիդի, փոշու և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի թիվ 160-Ն որոշման:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան: 2020 թվականին Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին չի գերազանցել համապատասխան ՄԹ-Կ-ն, դեկտեմբեր ամսին գերազանցել է աննշան՝ 0.155 մգ/մ^3 ($\text{ՄԹ-Կ}=0.15 \text{ մգ/մ}^3$)¹¹: Ածխածնի մոնօքսիդի, ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաներն երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՄԹ-Կ-ները, սակայն ամսվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվել են որոշակի գերազանցումներ:

Նկ. 11-ում ներկայացված է Երևան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները՝ 2019-2020 թվականների համար

Նկ. 11. Երևան քաղաքում հիմնական աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաները


ա) Փոշի




¹¹http://www.armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/od/eramsyak_od/IV%20Eramsyak_od_2020.pdf

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում զտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ	Վարկած Rev02

բ) Ծծմբի երկօքսիդ (SO₂)




գ) Ազոտի երկօքսիդ (NO₂)



Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյսիս 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

դ) Գետնամերձ օզոն (O3)



6.7 Բուսական և կենդանական աշխարհը

6.7.1 Բուսական աշխարհը

Տարածաշրջանի բուսականությունը ներառված է Երևանի ֆլորիստիկ շրջանում: Այստեղ տարածված են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարրերակները՝ օշինդրա-էֆեմերային, հալոֆիլ և պսամոֆիլ անապատային բուսատեսակներով: Դրանցից են՝ Օշան հավամբգանման (*Salsola ericoides*), Օշան գորշ (*Salsola cana*), Գեղածնկիկ մատիտեղանման (*Calligonum polygonoides*), Օշինդր սովորական (*Artemisia vulgaris*), Ավելարույս գետնատարած (*Kochia prostrata*), Լերդախոտ ալեհեր (*Teucrium polium*) և Փետրախոտ սոխուկավոր (*Poa bulbosa*):

Հայաստանում բարձր գյուղատնտեսական նշանակություն ունեցող մի շարք բույսերի/մշակաբույսերի տեսակներ հանդիպում են նաև Երևանի տարածաշրջանում, որոնք ներկայացված են ստորև **Աղյուսակ 10**-ում, իսկ դրանցից որոշների լուսանկարները բերված են **Նկար 12**-ում:

Աղյուսակ 10. Տարածաշրջանում հանդիպող, բարձր գյուղատնտեսական նշանակություն ունեցող բույսերի/մշակաբույսերի տեսակները և դրանց կիրառման ոլորտը

№	Անվանումը		Կիրառման ոլորտը
	Լատիներեն (Գիտական անվանում)	Հայերեն (Գրական անվանում)	
1	<i>Amaranthus retroflexus</i> L.	Հավակատար սովորական	Սննդային, կերային
2	<i>Chaerophyllum bulbosum</i> L.	Շուշանբանջար սոխուկավոր	Սննդային, մեղրատու, դեղագործական
3	<i>Chaerophyllum macrospermum</i>	Շուշանբանջար խոշորապտուղ	Սննդային, մեղրատու, դեղագործական
4	<i>Falcaria vulgaris</i> Bernh.	Միբեխ սովորական	Սննդային, կերակրի, դեղագործական
5	<i>Tragopogon dubius</i> Scop.	Մինձ կասկածելի	Սննդային, գեղագարդային
6	<i>Chenopodium album</i> L.	Թելուկ սպիտակ	Սննդային, անասնակեր

Մոնթեն Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Անվանումը		Կիրառման ոլորտը
	Լատիներեն (Գիտական անվանում)	Հայերեն (Գրական անվանում)	
7	Spinacia tetrandra Steven ex M. Bieb.	Սպանախ քառառէջ	Սննդային
8	Polygonatum verticillatum	Սինդրիկ օղակավոր	Սննդային, դեղագործական
9	Polygonatum orientale Desf	Սինդրիկ արևելյան	Սննդային և դեղագործական
10	Hippophaë rhamnoides L.	Զիչխան դժնիկանման	Սննդային, դեղագործական, էռոգապաշտպան, գեղագարդային, ներկատու, մեղրատու
11	Glycyrrhiza glabra L.	Մատուտակ մերկ	Սննդային, դեղագործական
12	Grossularia reclinata (L.) Mill.	Կոկոռչենի սովորական	Սննդային, դեղագործական, մեղրատու
13	Thymus serpyllum L.	Ուրց սողացող	Սննդային, դեղագործական, մեղրատու, օծանելիքի արտադրություն
14	Malva silvestris L.	Փիփերթ անտառային	Սննդային, դեղագործական, գեղագարդային
15	Rumex crispus L.	Ավելուկ գանգուր	Սննդային, դեղագործական
16	Ziziphus jujuba Mill	Ունաբ սովորական	Սննդային, դեղագործական
17	Crataegus pontica K.Koch	Սգնի պոնտական	Սննդային, դեղագործական, մեղրատու, գեղագարդային
18	Prunus spinosa L.	Սալոր փշավոր	Սննդային, դեղագործական, մեղրատու, տեխնիկական, հողապաշտպան և գեղագարդային
19	Pyrus sosnovskyi Fed.	Տանձենի Մոսնովսկու	Սննդային, դեղագործական, մեղրատու
20	Rosa canina L.	Մասրենի շան	Սննդային և դեղագործական
21	Rosa hemisphaerica Herrm	Մասրենի կիսագնդաձև	Սննդային և դեղագործական

Նկ. 12. Տարածաշրջանում հանդիպող, բարձր գյուղատնտեսական նշանակություն ունեցող բույսերի/մշակաբույսերի տեսակներից որոշների լուսանկարները



Շուշանբանջար - *Chaerophyllum macrospermum*



Սպանախ քառառէջ - *Spinacia tetrandra* Steven ex M. Bieb.

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02



Փիփերթ անտառային - *Malva silvestris* L.



Մինձ կաակածեղի - *Tragopogon dubius* Scop.



Կոկոռչենի սովորական - *Grossularia reclinata* (L.) Mill.



Չիխան դժնիկանման - *Hippophae rhamnoides* L.



Սպոր փշավոր - *Prunus spinosa* L.



Ունաթ սովորական - *Ziziphus jujuba* Mill

Երևանի տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և Բնության Պահպանության Միջազգային Միության (այսուհետ՝ "ԲԳՄՄ") Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակների ցուցակը բերված է ստորև **Աղյուսակ 11**-ում: Բուսատեսակներից որոշների լուսանկարները բերված են **Նկար 13**-ում:

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեկտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Աղյուսակ 11. Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակները

№	Բուսատեսակներ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ¹²
	Լատիներեն	Հայերեն	
1	<i>Acorus calamus</i> L.	Խնկեղեգ ճահնային	EN
2	<i>Sternbergia colchiciflora</i> Waldst. et Kit.	Շտերնբերգիա շնդեղածաղկային	EN
3	<i>Actinolema macrolema</i> Boiss	Ակտինոլեմ խոշորաբաժակ	EN
4	<i>Hohenackeria exscapa</i> (Stev.) K.-Pol.	Հոհենակերիա անցողուն	EN
5	<i>Szovitsia callicarpa</i> Fisch. & C.A.Mey.	Շովիցիա գեղապտուղ	EN
6	<i>Amberboa moschata</i> (L.) DC.	Վարդատերեփուկ մուշկային	EN
7	<i>Centaurea erivanensis</i> (Lipsky) Bordz.	Տերեփուկ երևանյան	VU
8	<i>Chardinia macrocarpa</i> K.Koch	Շարդինիա խոշորապտուղ	VU
9	<i>Cichorium glandulosum</i> Boiss. et Huet	Ճարճատուկ գեղձավոր	VU
10	<i>Gundelia rosea</i> M.Hossain & R.A.Al-Taey.	Կանգար վարդագույն	EN
11	<i>Asperuginoides axillaris</i>	Բոխինգերա անուշային	CR
12	<i>Erysimum eginense</i> Bornm.	Ջագախոտ էգինյան	EN
13	<i>Lepidium lyratum</i> L.	Նվարդակ քնարածև	EN
14	<i>Beta lomtogona</i> Fisch. et C. A. Mey.	Ճակնդեղ բաժանապտուղ	CR
15	<i>Halanthium kulpianum</i> (K. Koch) Bunge.	Աղածաղիկ կուլպական	EN
16	<i>Salsola tamamschjanae</i> Iljin	Օշան Թամամշյանի	EN
17	<i>Merendera sobolifera</i> Fisch. & C.A.Mey.	Խլոպուզ ընձյուղավոր	CR
18	<i>Euphorbia aleppica</i> L.	Իշակաթնուկ հալեպական	CR
19	<i>Astragalus camptoceras</i> Bunge	Գազ կորանդյուրավոր	EN
20	<i>Astragalus guttatus</i> Banks et Sol.	Գազ բծավոր	EN
21	<i>Onobrychis hajastana</i> Grossh.	Կորնգան հայաստանի	EN
22	<i>Gentiana olivieri</i> Griseb.	Բօզ Օլիվյեի	VU
23	<i>Bellevialia longistyla</i> (Miscz.) Grossh.	Բելեվալիա արկարառնակ	EN
24	<i>Iris elegantissima</i> Sosn.	Հիրիկ նրբագեղ	EN
25	<i>Malvella sherardiana</i> (L.) Jaub.	Մոլոշիկ Ժերարի	EN
26	<i>Aegilops crassa</i> Boiss.	Այծակն հաստ	CR
27	<i>Rhizocephalus orientalis</i> Boiss.	Արմատագլխիկ արևելյան	VU
28	<i>Triticum araraticum</i> Jakubz.	Ցորեն արարատյան	VU
29	<i>Triticum urartu</i> Tumanian ex Gandilyan	Ցորեն ուրարտու	EN
30	<i>Thalictrum isopyroides</i> C. A. Mey.	Քնձմնձուկ իզոպիրոնման	VU
31	<i>Tamarix octandra</i> Bunge	Կարմրան ութառէջ	EN
32	<i>S. punctipes</i> (Peck) Singer	Յուղասուն մայրու	CR

¹²EX (*Extinct*) - անհետացած տեսակ,
CR (*Critically Endangered*) - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ,
EN (*Endangered*) - վտանգված տեսակ,
VU (*Vulnerable*) - խոցելի տեսակ,
DD (*Data Deficient*) - տվյալների անբավարարություն և այլն

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խնուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Սեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Նկ. 13. Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակներից որոշների լուսանկարները



Վարդատերևոտ մուշկալին - *Amberboa moschata* (L.) DC.



Ճակղղեղ բաժանապտուղ - *Beta lomatogona* Fisch. et C. A. Mey.



Իշակաթնուկ հալեպական - *Euphorbia aleppica* L.



Բոգ Օլիվիերի - *Gentiana olivieri* Griseb.



Կորնգան հայաստանի - *Onobrychis hajastana* Grossh.



Հոհենակերիա անցողուն - *Hohenackeria exscapa* (Stev.) K.-Pol.

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02



Օշան Թամսաշյանի - *Salsola tamamschjanae* Iljin



Քնձնձուկ իզոպիրոնման - *Thalictrum isopyroides* C. A. Mey.

6.7.2 Կենդանական աշխարհը

Երևանի տարածաշրջանի շրջակա միջավայրի բաղադրիչները կրում են մարդու տարատեսակ գործունեության ազդեցությունը, այդ իսկ պատճառով բնական պայմաններում հանդիպող կենդանիները հազվագյուտ են: Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Աղյուսակ 12-ում ներկայացված են Երևանի տարածաշրջանում հանդիպող կենդանական աշխարհին պատկանող տեսակները, որոնցից որոշների լուսանկարները բերված են Նկար 14-ում: Տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներ չեն հայտնաբերվել:

Աղյուսակ 12. Տարածաշրջանում հաճախ հանդիպող կենդանատեսակները

№	Անվանումը	
	Լատիներեն (Գիտական անվանում)	Հայերեն (Գրական անվանում)
1	<i>Rana ridibunda</i>	Լճային գորտ
2	<i>Bufo variabilis</i>	Կանաչ դողոշ
3	<i>Pelobates syriacus</i>	Սիրիական սխտորագորտ
4	<i>Eumeces schneideri</i>	Երկարաոտ սցինկ
5	<i>Laudakia caucasia</i>	Կովկասյան ազմա
6	<i>Typhlops vermicularis</i>	Կույր օձ
7	<i>Dolichophis schmidtii</i>	Շմիդտի սահնօձ
8	<i>Eirenis collaris</i>	Վզնոցավոր էյրենիս
9	<i>Eirenis punctatolineatus</i>	Հայկական էյրենիս
10	<i>Hemorrhois nummifer</i>	Կապարագույն Սահուկ
11	<i>Telescopus fallax</i>	Կատվօձ
12	<i>Macrovipera lebetina</i>	Գյուրգա/(Դագաղային Իծ, Յաթաղան)
13	<i>Corvus corone</i>	Մոխրագույն ագռավ
14	<i>Anas platyrhynchos</i>	Կոնչան բաղ
15	<i>Gallinula chloropus</i>	Եղեգնահավ
16	Common quail	Լոր
17	<i>Columba livia</i>	Թխակապույտ աղավնի
18	<i>Philomachus pugnax</i>	Կտցար
19	concolor	Արևելաեվրոպական ոգնի

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյսիս 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Անվանումը	
	Լատիներեն (Գիտական անվանում)	Հայերեն (Գրական անվանում)
20	Pipistrellus kuhlii	Միջերկրածովյան փոքրաչղջիկ
21	Pipistrellus pipistrellus	Թզուկ փոքրաչղջիկ
22	Sylvaemus witherbyi	Սովորական դաշտամուկ
23	Rattus norvegicus	Մոխրագույն առնետ

Նկ. 14. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակներից որոշների լուսանկարները



Pelobates syriacus



Rana ridibunda



Միջիսկյան սխտորագորտը - *Dolichophis schmidtii*



Հայկական Էյրենիս - *Eirenis punctatolineatus*



Մոխրագույն առնետ - *Rattus norvegicus*



Արևելաեվրոպական ողնի - *Erinaceus concolor*

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեպտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02



Կովկասյան ագնա - *Laudakia caucasia*



Երկարատու սցինկր - *Eumeces schneideri*



Լոռ - *Common quail*



Մոխրագույն ագռավ - *Corvus corone*

Նախատեսվող գործունեության տարածաշրջանից դուրս Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից կարող են հանդիպել՝

- Կաթնասուններից՝
 - Մեհելիի պայտաքիթ չղջիկը (*Rhinolophus Mehelyi*), կատեգորիան՝ VU,
 - Ասիական լայնական չղջիկը (*Barbastella leucomelas*), կատեգորիան՝ VU,
 - Սովորական երկարաթև չղջիկը (*Miniopterus schreibersi*), կատեգորիան՝ VU,
 - Լայնական ռնիս - *Erinaceus (Hemiechinus) auritus*, կատեգորիան՝ EN:
- Թռչուններից՝
 - Կանաչ մեղվակերը (*Merops persicus Pallas*), կատեգորիան՝ VU,
 - Կարմրակատար շամիրուկը - *Lanius senator*, կատեգորիան՝ VU:
- Սողուններից՝
 - Երկարաթև սցինկր (*Eumeces schneideri*), կատեգորիան՝ VU:

6.8 Հատուկ պահպանվող տարածքները

Նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ բնության հատուկ պահպանվող տարածքներն են՝

- 1) «Էրեբունի» պետական արգելոցը՝ գտնվում է մոտ 6.5կմ-ի վրա,
- 2) «Ջրվեժ» անտառպարկը՝ գտնվում է մոտ 11.5կմ-ի վրա:

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեկտեմբեր 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

Ակնհայտ է, որ ոչ առաջինը, ոչ էլ երկրորդը չեն ազդվի նախատեսվող գործունեության իրականացման աշխատանքներից:

6.9 Պատմամշակութային հուշարձանները

ՀՀ կառավարության 07.10.2004թ.-ի *Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակը հաստատելու մասին* №1616-Ն որոշման¹³ համաձայն Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում կան թվով 10 պատմամշակութային հուշարձան/հուշարձանախումբ, որոնք ներկայացված են ստորև **Աղյուսակ 13**-ում:

Աղյուսակ 13. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի պատմամշակութային հուշարձանները

№	Հուշարձանախումբը, հուշարձանը	Կառուցման ժամանակաշրջանը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը հանրապետական/տեղական	Ծանոթություն
1	Գերեզմանոց "Եռաբլուր" փառքի պանթեոն	1990թ.	հվ-ամ մասում, Ծովակալ Իսակովի պ.- Սեբաստիայի փ. խաչմերուկից հս-ամ	Հ	
2	Խաչքար Արցախյան պատերազմի զոհերին	1994թ.	Սեբաստիայի փ.	Տ	Սբ. Աստվածածին եկեղեցու զանգակատան առկա պատին կից
3	Հուշահամալիր Երկրորդ աշխարհամարտում տարած հաղթանակի 40 ամյակին	1985թ.	Սեբաստիայի փ.	Տ	Թաղապետարանի շենքի մոտ, քանդ.՝ Ս. Նազարյան, ճարտ.՝ Գ. Ռաշիդյան
4	Հուշարձան՝ «Հին և նոր Մալաթիա»	1973թ.	Սեբաստիայի փ.	Տ	Թաղապետարանի մոտ, պուրակում, ճարտ.՝ Ֆ. Չարգարյան
5	Հուշարձան Ստեփան Ծախումյանի	1970թ.	Սեբաստիայի փ. 32	Տ	Թաղապետարանի շենքի առջև, քանդ.՝ Ֆ. Սողոյան
6	Հուշարձան Դանիել Վարուժանի	1974թ.	Սեբաստիայի փ. 19	Տ	Թիվ 89 համանուն դպրոցի առջև, քանդ.՝ Թ. Չորեքչյան
7	Ջրանցք՝ Ումեշինի (Էջմիածնի առու)	մ.թ.ա. 7 դ.	Հրազդանի աջ ափին, Կարմիր բլուրի մոտ	Հ	վրկո՝ 17 դ. վրջ. 1815 թ., 1922 թ.
8	Քաղաքի մուտք. Երևանի հարավարևմտյան մուտքը («Ծինարար Արծիվ»)	1966թ.	Էջմիածնի խճ.	Հ	ճարտ.՝ Ռ. Իսրայելյան, քանդ.՝ Ա. Հարությունյան
9	Խաչքար	14-15 դդ.	Սեբաստիայի փ., Թաղապետարանի	Տ	պարզ է, ինքնատիպ հորինվածքով

¹³<https://www.arlis.am/documentview.aspx?docid=154750>

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյսիս 2022	ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

№	Հուշարձանախումբը, հուշարձանը	Կառուցման ժամանակաշրջանը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը հանրապետական/տեղական	Ծանոթություն
			մոտ, Մր. Աստվածածին եկեղեցուց 10 մ հս		
10	Հուշարձան «Վահագն Վիշապաքաղ»	1975թ.	Ծովակալ Իսակովի պ. և Մերաստիա փ. խաչմերուկի հատվածում	Հ	քանդ. Կ. Նուրիջանյան

Թվարկված պատմամշակութային հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում կամ հարևանությամբ: ՀՀ Կառավարության 14.08.2008թ.-ի №967-Ն որոշմամբ¹⁴ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն, նախատեսվող գործունեության տարածքում բնության հուշարձաններ չեն հանդիպում:

6.10 Աղմուկի և թրթռման մակարդակները

Նախատեսվող գործունեության տարածքում աղմուկի և թրթռման ելակետային վիճակի վրա զգալի ազդեցություն է թողնում Մոնթե Մելքոնյան փողոցով և Ծիծեռնակաբերդի խճուղիով տրանսպորտային միջոցների ինտենսիվ երթևեկությունը, ինչպես նաև այդ երկու ճանապարհների միջնամասում ընթացող շինարարական աշխատանքները:

Աղմուկի և թրթռման ֆոնային մակարդակների վրա «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման աշխատանքների արդյունքում առաջացող աղմուկի և թրթռման ազդեցությունը որոշելու նպատակով ԾՄԱԳ փուլում իրականացվել են նախատեսվող գործունեության հողատարածքում և մոտակա ազդակիր վայրերում («Դալմա» առևտրի կենտրոնի և «Օրանժ ֆիթնես» ակումբի մոտ) աղմուկի և թրթռման գործիքային չափումներ (տես **Նկար 15-ը**), որոնց արդյունքները՝ **Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում** N2-III-11.3 սանիտարական նորմերով¹⁵ և **Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը** ՀՆ N2.2.4-009-06-ով¹⁶ սահմանված նորմատիվ արժեքների հետ համադրված, ամփոփված են համապատասխանաբար **Աղյուսակներ 14-ում և 15-ում**:

Նկ. 6.15. Նախատեսվող գործունեության տարածքում և շրջակայքում աղմուկի և թրթռման գործիքային չափումների կետերը

¹⁴<https://www.arlis.am/documentview.aspx?docid=157090>

¹⁵<https://www.arlis.am/documentview.aspx?docid=163246>

¹⁶<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=163276>

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խնուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյսիս 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02



Աղյուսակ 14. Աղմուկի գործիքային չափումների արդյունքները և դրանց համադրումը ՀՀ սանիտարական նորմերով սահմանված ձայնի/աղմուկի թույլատրելի մակարդակների հետ

Չափման կետ	Չափման կետի նշանակությունը ըստ N2-III-11.3 սանիտարական նորմերի	Ձայնի փաստացի համարժեք մակարդակը, դԲԱ	Ձայնի փաստացի առավելագույն մակարդակը, դԲԱ	Ձայնի համարժեք թույլատրելի մակարդակները, դԲԱ	Ձայնի առավելագույն թույլատրելի մակարդակները, դԲԱ
N1	Խանութների առևտրի սրահներ, օդանավակայանների և կայարանների սպասասրահներ, կենցաղային սպասարկման կազմակերպությունների ընդունման կետեր	62.3	81.4	60	75
N2		65.1	84.7		
N3	Աշխատատեղ	54.3	-	80	-

*բոլոր չափումները կատարվել են ցերեկային ժամանակաշրջանում

Աղյուսակ 15. Թրթռման գործիքային չափումները արդյունքները և դրանց համադրումը ՀՀ հիգիենիկ նորմերով սահմանված թրթռման արագացման սահմանային թույլատրելի մեծությունների հետ

Չափման կետ	Ընդհանուր թրթռման կարգը ըստ N2.2.4-009-06 հիգիենիկ նորմերի	Ձայնի փաստացի համարժեք մակարդակը, դԲԱ	Ճշգրտված և համարժեքային ճշգրտված սահմանային թույլատրելի արժեքները, դԲ
N1	Տրանսպորտատեխնոլոգիական թրթռում (2-րդ կարգ)	76.4	109
N2		81.2	
N3		71.8	

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

6.11 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը

Նախատեսվող գործունեության հողատարածքը գտնվում է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակի նկարագրության համար հիմք է հանդիսացել Երևան քաղաքի ավագանու կողմից 31.10.2017թ.-ին ընդունված "Երևանի զարգացման 2018-2022թթ. հնգամյա ծրագիր" թիվ 56-Ն որոշումը:

Մալաթիա-Սեբաստիա

Մակերեսը՝ 2516հա,

Բնակչությունը՝ 142600 մարդ:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը սահմանակից է Աջափնյակ, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջաններին: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի և Արմավիրի մարզերին: Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքը կազմում է 2516հա, բնակչությունը՝ 136.7 հազ. մարդ: Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը 11.3% է, իսկ բնակչության թվաքանակում՝ 12.7%: Վարչական շրջանն ընդգրկում է Հաղթանակ թաղամասը, Լենիգրադյան, Շերամի, Բաբաջանյան փողոցներով և Իսակովի պողոտայով ճյուղավորված բնակելի զանգվածները:

Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կանաչապատ տարածքի մակերեսը կազմում է 90.01հա, առկա է 9 այգի և պուրակ: Ոռոգման ցանցի երկարությունը 40.7կմ է:

Կրթություն, մշակույթ և սպորտ

Վարչական շրջանում գործում է 24 դպրոց, որից ավագ դպրոց՝ 4, միջնակարգ՝ 1, կրթահամալիր՝ 1, հիմնական՝ 14 և 4 մասնավոր դպրոց: Վարչական շրջանում գործում է 24 մանկապարտեզ, որից երկուսը մասնավոր են: Գործում է երեք մշակութային օջախ՝ Ալ. Աճեմյանի անվան երաժշտական և "Մալաթիա" արվեստի դպրոցները, «Սեբաստիա» մշակութային կենտրոնը և գրադարանը: Գործում է 4 մարզադպրոց՝ մանկապատանեկան համալիր մարզադպրոց, Վ.Չատիկյանի անվան մարզակումբ, Շախմատի դպրոց և Օլիմպիական հերթափոխի հանրապետական մարզադպրոց:

Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Վարչական շրջանում գործում են «Աստղիկ» ԲԿ, «Արմենիկում» ԲԿ, «Սուրբ Աստվածածին» ծննդատունը, թվով 6 պոլիկլինիկաներ, որից 2-ը՝ ատամնաբուժական:

7 Ծրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման արդյունքները

Նախագծային փաստաթղթերի, առկա գրականության ու քարտեզների վերլուծության, դաշտային ուսումնասիրությունների իրականացման, ինչպես նաև Նախագծի շահառուների հետ քննարկումների և հանրային լուսման իրականացման արդյունքում հատկորոշվել են այն հիմնական ռիսկերը և ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ նախատեսվող գործունեության՝ «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման ժամանակ: Այդ ռիսկերը և ազդեցությունները

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՉԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

ամփոփված են ստորև՝ **Բաժիններ 7.1-8.6**-ում, իսկ դրանց նվազեցմանը և մեղմացմանը միտված բնապահպանական և աշխատանքի անվտանգության միջոցառումները ներկայացված **Գլուխ 8**-ում:

7.1 Մթնոլորտային օդի աղտոտումը

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում փոշու տեսքով մթնոլորտային արտանետումների հիմնական մասը կառաջանա հողային աշխատանքների (Փուլ II), շինության կառուցման (Փուլ III) և տարածքի բարեկարգման/կանաչապատման (Փուլ V) փուլերում: Գազային արտանետումները հիմնականում պայմանավորված են շինարարական տեխնիկայի (էքսկավատոր, բուլդոզեր, ավտոամբարձիչ, բետոնախառնիչ) և բեռնատար մեքենաների աշխատանքից և բաղկացած են վառելիքի այրման արգասիքներից՝ CO-ից, CH-ից, NOx-ից, ՊՄ-ից, N₂O-ից, ՑՕՄ-ից և CO₂-ից:

Փոշու և գազային արտանետումների հաշվարկը ըստ նախատեսվող գործունեության իրականացման փուլերի և կիրառվող տեխնիկայի՝ կատարված սույն Հայտի **Հավելված 8**-ում բերված մեթոդակարգի, ցույց են տալիս, որ տեխնոլոգիական կենտրոնի կառուցման ընթացքում փոշու արտանետումները կկազմեն մոտ 2.2տ: Ստորև առաջարկվող միջոցառումների իրականացման դեպքում, փոշու արտանետումների քանակը հնարավոր կլինի նվազեցնել մոտ 30%-ով, այսինքն մինչև 1.5տ:

1. Կառուցապատման տարածքի պարագծով կազմակերպել խոնավ ջրային ցնցուղ՝ հատկապես հողային աշխատանքների ժամանակ,
2. Սորուն նյութեր տեղափոխելիս բեռնատար մեքենաների թափքը պահել ծածկված վիճակում,
3. Սորուն նյութերը շին. հրապարակում պահել ծածկված անջրաթափանց թաղանթով,
4. Ծին.հրապարակ բեռնատար մեքենաների մուտքի և ելքի ժամանակ լվանալ դրանց անիվները:

Գազային արտանետումների հաշվարկված քանակները կիրառվող շինարարական տեխնիկայից և տրանսպորտային միջոցներից կկազմեն մոտ 8.5տ (առանց CO₂-ի)՝ շինարարության 32.8 ամիսների կտրվածքով և մասնակիորեն կարող են նվազել սույն Հայտի **Գլուխ 8**-ում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում:

7.2 Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա

Նախատեսվող գործունեության տարածքում իրականացված ինժեներակրթաբանական պայմանների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գրունտային ջրերը 40.0մ և 60.0մ հորատանքներում չեն բացահայտվել և դրանք ըստ գրականության տվյալների գտնվում են ավելի խորը հորիզոններում: Հետևաբար, նախատեսվող գործունեությունը չի կարող ազդել ստորգետնյա ջրերի վրա:

Ծին. հրապարակից ամենամոտ մակերևութային ջրային հոսքերը՝ Ստորին Հրազդանի ջրանցքն է և Հրազդան գետը, որոնք գտնվում են տարածքից համապատասխանաբար 600մ և 1000մ հեռավորությունների վրա: Կարելի է փաստել, որ շինարարական աշխատանքները նույնպես չեն ազդի մակերևութային ջրերի վրա:

Հարկ է նշել նաև, որ մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը նախատեսվում է շին. հրապարակի պարագծով կազմակերպել նստվածքային դրենաժ/առու՝ տեղադրելով դրանցում հատուկ արտորբենտ գործվածքներ՝ հեղեղաջրերը որսալու նպատակով: Դա թույլ կտա բացառել հեղեղաջրերի ներթափանցումը շինարարական հրապարակից դուրս և արդյունքում նաև շրջակա հողերի աղտոտումը:

Մոնթե Մելքոնյան փող. 22/3 և Ծիծեռնակաբերդի խճուղի 9/2, 9/1 և 33 հասցեներում գտնվող տարածքներում «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման նախագիծ		
Ամսաթիվ Մեյ 2022	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ	Վարկած Rev02

7.3 Ազդեցություն հողային ռեսուրսների վրա

Տեխնոլոգիական կենտրոնի կառուցման ընթացքում իրականացվող հողային աշխատանքները բնութագրվում են հողային հանույթի (գրունտերի)¹⁷, հողի բերրի շերտի առաջացմամբ, դրանց մի մասի պահպանմամբ, իսկ մյուս մասի հեռացմամբ, որոնց քանակային արտահայտումը ամփոփված է ստորև՝

- Հողային հանույթի առաջացում (էքսկավացիա)՝ 189445մ³, ներառյալ՝
 - հողի բերրի շերտի առաջացում՝ մոտ 5000մ³,
- Գրունտների հետլիցք՝ 30180մ³,
- Գրունտների տեղափոխում դեպի աղբավայր՝ 154265մ³:

Մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը առաջացող հողի բերրի շերտը ժամանակավորապես պահվելու է նախատեսվող գործունեության տարածքի հարավային մասում (տես **Հավելված 9-ը**, բուսաշերտի պահեստ)՝ ծածկված անջրաթափանց թաղանթով կամ արագ աճող խոտատեսակով (հողը ժամանակավորապես կայունացնելու համար): Կուտակված հողի բերրի շերտը օգտագործվելու է կենտրոնի տարածքի հետագա բարեկարգման/կանաչապատման աշխատանքների ժամանակ՝ հաստատված կանաչապատման նախագծի համաձայն (տես **Բաժին 5.13-ը**):

30180մ³ ծավալով գրունտը, որը պետք է հետագայում օգտագործվի որպես հետլիցք, պահվում է շին. հրապարակում (տես **Հավելված 9-ը**, գրունտի պահեստ): Գրունտը պահվելու է անջրաթափանց թաղանթով ծածկված վիճակում: Մնացած հողային հանույթի՝ գրունտի (154265մ³) տեղափոխումը դեպի աղբավայր պետք է իրականացվի բեռնատար մեքենաներով՝ ծածկված թափքով: Դիտարկվում են և Նուբարաշենի և Աջափնյակի աղբավայրերը, որոնք գտնվում են շին. հրապարակից 10-12 կմ հեռավորությունների վրա: Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում անհապաղ պետք է դադարեցնել հողային աշխատանքները, ինչպես նաև գրունտի աղբավայր տեղափոխելը: Նշված միջոցառումները թույլ կտան նվազագույնի հասցնել շինարարական աշխատանքների՝ հողային ռեսուրսների վրա բացասական ազդեցությունը:

7.4 Թափոնների առաջացումը և կառավարումը

Կանխատեսվում է, որ «Դալան» տեխնոլոգիական կենտրոնի կառուցման աշխատանքների ընթացքում կառաջանան հետևյալ տեսակի թափոններ՝

- Շինարարական աղբ (ծածկագիր՝ 91200601 01 00 4)¹⁸, քանակը՝ 320մ³,
- Կենցաղային աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4)¹⁹, քանակը՝ 8.9տ,
- Սև մետաղի ջարդոն (ծածկագիր՝ 35131100 01 00 4)²⁰, քանակը՝ 4.5տ,
- Գունավոր մետաղների ջարդոն (ծածկագրեր՝ 35310101 01 99 5, 35310301 01 01 3)²¹, քանակը՝ 2.0տ,
- Եռակցման խարամ (ծածկագիր՝ 31404800 01 99 4), քանակը՝ 0.1տ,
